



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 15 ՌԵԿՏԵՄԲԵՐ, 2014

ՏԵՐՈՒՄԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս պիս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 78

ԱՍՏՈՒԱԾ ԻՆՉՊԷՍ ԱՌԱՋՆՈՐԴԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Հակառակ այդ բոլորին, անոնք դարձեալ մեղանչեցին, չհաւատացին անոր գործած հրաշքներուն: Ուստի Աստուած մէկ փչելով սպառեց անոնց օրերը, եւ սարսափի մէջ՝ անոնց կեանքերը: Ամէն անգամ որ Աստուած անոնցմէ մաս մը կը սպաննէր, իրեն կը դառնային, կը դժգային եւ զինք կը փնտռէին անձկագին: Կը խոստովանէին թէ Աստուած է իրենց օգնական Վեմը, թէ Բարձրեալ Աստուածը ինքն է իրենց Փրկիչը. բայց անկեղծ չէին անոնց խօսքերը, սուտ էին անոնց բոլոր արտայայտութիւնները: Իրենց սիրտը բնաւ կապուած չէր Աստուծոյ, եւ անոր ուխտին հաւատարիմ չէին: Սակայն գթառատն Աստուած ներեց անոնց մեղքերը, եւ չբնաջնջեց զանոնք. այլ՝ շատ անգամ իր բարկութիւնը զսպեց, եւ իր ամբողջ զայրոյթը անոնց վրայ չթափեց: Նկատի առաւ, որ անոնք տկար մահկանացուներ են, հովին նման՝ որ կ'անցնի եւ ալ բնաւ ետ չի գար: Անապատին մէջ քանի՜ անգամներ դառնացուցին զայն, զայն տրտմեցուցին այդ ամայի վայրին մէջ: Կրկին ու կրկին զԱստուած փորձեցին, զայրացուցին Իսրայէլի Սուրբ Աստուածը: Մոռցան ինչ որ անիկա ըրաւ այն օրը՝ որ զիրենք ազատեց ռոսիսին ձեռքէն: Զանոնք առաջնորդեց այնքան ապահով, որ չվախցան ծովը մտնելէ, մինչդեռ իրենց թշնամիները ծովուն մէջ ընկղմեցան:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխա՛հիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս՝ նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՊՈԹՔ

Պահապան ամենայնի Քրիստոս,
աչ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,
ի նսրիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ
❧
ԵԼԻՅ ԺԷ (17) ԳԼՈՒԽ
❧

ԱՊԱՌԱԺԷՆ ԶՈՒՐ (17:1-7)

Տիրոջ խօսքին համաձայն անոնք կը շարունակենք իրենց ընթացքը, բայց դարձեալ մէկ այլ ուրիշ փոփոխութիւնով: «Մեզի ջուր փութ, որ խմենք»: Մովսէս կը պատասխանէ. «Ինչո՞ւ ինձի հետ կը վիճիք. ինչո՞ւ Տէրը կը փորձէք»: «Ինչո՞ւ համար մեզ Եգիպտոսէն հանեցիր»: Մովսէս ըսաւ Աստուծոյ. «Ի՞նչ ընեն այս ժողովուրդին. գրեթէ պատրաստ են զիս քարկոծելու»: Տէրը ըսաւ. «Ժողովուրդին առջեւ անցիր ու Իսրայէլի ծերերը քեզի հետ առ եւ քու գաւազանդ, որով գետը զարկիր, ձեռքդ առ ու զնա: Ահա Քորեբի մէջ ժայռին վրայ՝ հոն քու առջեւ կը կայնիս: Ժայռին զարկ ու անկէ ջուր պիտի ելլէ եւ ժողովուրդը պիտի խմէ»: «Այն փեղին անունը Մասսա ու Մերիպա դրաւ. որովհետեւ Իսրայէլի որդիները հոն վիճեցան եւ Տէրը փորձեցին՝ ըսելով. ”Արդեօք Տէրը մեր մէջ է”»:

Ինչպէս անցեալ անգամին, այս անգամ ալ, ամէն դժգոհութիւն ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ հանդէպ իրենց ունեցած վստահութեան պակասի արտայայտութիւն: Հակառակ այս փոփոխութիւններուն, սակայն, Աստուած ամենայն համբերաբարութեամբ գանոնք ուզեց դաստիարակել հոգեւորապէս, եւ որպէսզի անոնք իրենց վստահութիւնը զօրացնեն առ Աստուած: Մանաւանդ, այնքան արեւն որ փակաին օրէնքը չէր փրկուած, որպէս դաստիարակ, այլ անոնք կը գրնուէին Աստուծոյ շնորհքին փակ, Աստուած Իր ողորմածութեամբ կը նայէր անոնց: Այնպէս ինչպէս պիտի ըսէ Սաղմոսերգուն. «Սակայն գթառարն Աստուած ներեց անոնց մեղքերը, եւ չբնաջնջեց գանոնք. այլ՝ շար անգամ իր բարկութիւնը զսպեց, եւ իր ամբողջ զայրոյթը անոնց վրայ չթափեց»:

Ամենահետաքրքրականը այն է, որ Մովսէսը զարկաւ ժայռին որպէսզի ջուր դուրս գայ, բայց խորքին մէջ ջուրը փութող Աստուած Ինքն էր եւ ոչ թէ Մովսէսին գաւազանին հարուածը: Իսկ նոյն այս ժայռին մասին կը խօսի Պօղոս Առաքեալ ըսելով, թէ այն ժայռը Քրիստոս Ինքն է, որպէս նաեւ հաւաքքի ու վստահութեան կշռան: Ուրեմն, ամէն անգամ որ ժողովուրդը վստահէր Իրեն, Ինք անոնց պէտքերը պիտի մարակարարէր եւ հոգեւորապէս արթուցանէր: Որովհետեւ ջուրը նաեւ պիտի խորհրդանշէ հաւաքք եւ Սուրբ Հոգիի պարգեւներ:

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՄԱՂԷԿԻ ՀԵՏ (17:8-16)

Ահա այս ճամբորդութեան ընթացքին յանկարծ Ամաղեկացիները կը յարձակին Իսրայէլի որդիներուն վրայ: Հաւանաբար այդ պատերազմը ջուրին փիրանալու համար էր: Հետաքրքրական արտայայտութիւն մըն է երբ կ'ըսէ. «Երբ Մովսէս իր ձեռքերը վեր կը վերցնէր, Իսրայէլ կը յաղթէր, երբ իր ձեռքերը վար կ'իջեցնէր, Ամաղեկ կը յաղթէր: Եւ Մովսէսին ձեռքերը ծանրանալուն՝ քար մը առին ու անոր փակ դրին եւ ինք անոր վրայ նստաւ ու Ահարոն եւ Ուր, մէկը՝ մէկ կողմէն ու միւսը միւս կողմէն անոր ձեռքերը հաստապարուն մնացին»:

Ահա այս պատերազմի վայրին անունը Եհովանիսի կը դնէ Մովսէս, որ կը նշանակէ Տէրը իմ դրօշակս է, եւ զիտենք որ դրօշակը միշտ բանակին առջեւէն կ'երթայ, ուրեմն այս պարագային ալ Տէրը Ինքն է առաջնորդողը Իր ժողովուրդը: Ինչպէս նաեւ հոն ուր դրօշակ կը պարզուի, կը նշանակէ թէ այդ փեղին փերը յաղթողը այդ դրօշակը ունեցողն է:

Աստուած կ'ուզէ որ այս դրուագը արձանագրուի: Տէրը մասնաւոր նպատակ մը կը հետապնդէ այս արձանագրութեան մէջ: Հետաքրքրական է, որ ուրիշ պարագաներու պատուէր չի փար արձանագրութեան: Մանաւանդ երբ այսպէղ նաեւ կը շեշտէ ըսելով. «Ամաղեկի յիշատակը յաւիտենապէս պիտի ջնջեն» կամ «ազգէ-ազգ պիտի պատերազմի ամաղեկի դէմ»: Այս բոլորը, որովհետեւ Աստուած դաստիարակական նշանակութիւն կը հետապնդէ: Ան խոստացած էր առաջնորդել Իր ժողովուրդը, աստիճանաբար այդ խոստումին գործնականացումը, որպէսզի զալիք բոլոր սերունդները փեսանեն թէ Տէրը Ինքն Եգիպտոսէն հանեց, ծովէն անցուց, ջուր փութաւ եւ պատերազմներուն մէջ զիրենք յաղթական հանդիսացուց: